ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 08.06.2026 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 508-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Թամարա Բաղդասարյանի, խորհրդի անդամներ՝ Պավել Գյուլումյանի, Էմին Բեգլարյանի, Ցոլակ Մարգարյանի, Դավիթ Վարդիկյանի, Լիլիթ Ղազանչյանի, Ռուբեն Հակոբյանի, Ռոման Ահարոնյանի և Մարինե Ֆարմանյանի,

գրավոր ընթացակարգով քննության առնելով դիմող Աննա Սահակյանի բողոքը (մուտք՝ 30.06.2026թ. № 1840-26) Պալատի նախագահի 08.06.2026 թվականի թիվ 508-Ա որոշման դեմ,

ՊԱՐԶԵՑ՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Աննա Սահակյանը (**այսուհետև նաև՝ Բողոքաբեր կամ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետև նաև՝ Պալատ**), հայտնել է, որ 26.12.2023թ. փաստաբան Էդվարդ Չինարյանի (**այսուհետև՝ Փաստաբան**) հետ կնքել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն վերջինս պարտավորվել է ներկայացնել Բողոքաբերի շահերը քրեական վարույթի շրջանակներում, որում վերջինս հանդիսանում է տուժող:

Բողոքաբերը դժգոհություն է հայտնել իրեն մատուցված ծառայությունների որակից և նշել, որ Փաստաբանը խորհրդատվության ընթացքում խոստացել է, որ խնդիրը հաջողությամբ կլուծի, սակայն երեք տարվա ընթացքում գործը որևէ դրական ընթացք չի ունեցել:

Բողոքաբերի պնդմամբ Փաստաբանը չի պատրաստել իրեն առերեսման և չի

ներկայացրել քննիչին իր օգտին եղած փաստերը:

Բողոքաբերը հայտնել է, որ Փաստաբանը երբեք չի զանգահարել իրեն և չի տեղեկացրել գործի ընթացքի ու կատարված աշխատանքների մասին: Դիմողի զանգերը պարբերաբար մնացել են անպատասխան:

Բողոքաբերը հայտնել է, որ վճարել է Փաստաբանին պահանջված ամբողջ գումարը, իսկ հունվար ամսին Բողոքաբերը լուծել է պայմանագիրը, սակայն Փաստաբանը հրաժարվել է վերադարձնել գումարի մի մասը:

Բողոքաբերը նշել է, որ Փաստաբանի գործողությունների հետևանքով զրկվել է գումարներից և ժամանակ է կորցրել: Պայմանագիրը լուծելիս, երբ Բողոքաբերը մոտեցել է գրասենյակ՝ փաստաթղթերը վերցնելու նպատակով, հայտնաբերել է գործի ընթացքին վերաբերող քննչական բաժնից ստացված նոր նամակ, որի մասին Փաստաբանը մեկ ամիս շարունակ չի տեղեկացրել իրեն:

Բողոքաբերը նաև նշել է, որ այդ ժամանակ Փաստաբանն արտահայտվել է գռեհիկ խոսույթով և դրսևորել է գռեհիկ պահվածք, ինչեցրել է հայհոյանքներ:

Բողոքաբերը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ և փաստաբան Էդվարդ Չինարյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Ի լրումն դիմումի գրությամբ ներկայացվել է կնքված պայմանագրի պատճենը, իսկ Բողոքաբերի բացատրությամբ՝ նաև բջջային հավելվածից կատարված զանգերի արտատպումը և քննիչի՝ Փաստաբանին ուղղված 09.12.2025թ. թիվ 47/443570-25 գրության պատճենը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Բողոքաբերը խնդրել է փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը 08.06.2026 թվականի թիվ 508-Ա որոշմամբ **(այսուհետև նաև՝ Որոշում)** փաստաբան Էդվարդ Վոլոդյայի Չինարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժել է՝ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի բացակայության պատճառաբանությամբ:

2. **<u>ՀՀ փաստաբանների պալատի նախագահի</u>** <u>08.06.2026</u> **<u>թվականի թիվ</u>** <u>508-</u>**<u>Ա որոշման էությունը</u>**<u>.</u>

Դիմողի բողոքն, ըստ էության, վերաբերում է հետևյալ հանգամանքներին՝ Փաստաբանը պատշաճ որակի ծառայություն չի մատուցել, Դիմողին չի նախապատրաստել առերեսման, քննիչին չի ներկայացրել Դիմողի օգտին եղած փաստերը, պատշաճ կերպով չի տեղեկացրել գործի ընթացքի մասին, չի պատասխանել հեռախոսազանգերին, պայմանագիրը լուծելուց հետո չի վերադարձրել հոնորարի մի մասը, ինչպես նաև գրասենյակում դրսևորել է ոչ պատշաճ վարքագիծ:

Անդրադառնալով Դիմողի այն պնդմանը, որ Փաստաբանը պատշաճ կերպով չի իրականացրել նրա շահերի պաշտպանությունը քրեական վարույթում, հարկ է արձանագրել, որ ներկայացված նյութերով չի հիմնավորվում Փաստաբանի կողմից մասնագիտական պարտականությունների առերևույթ խախտում:

Դիմողը նշել է, որ Փաստաբանն իրեն չի նախապատրաստել առերեսման և քննիչին չի ներկայացրել իր օգտին եղած փաստերը, սակայն դիմումում և դրան կից նյութերում չեն հստակեցվել, թե հատկապես ո՞ր փաստերն են մնացել չներկայացված, ինչ ապացուցողական նշանակություն են ունեցել դրանք քրեական վարույթի համար, երբ և ինչ հանգամանքներում է Դիմողը Փաստաբանին հայտնել այդ փաստերի մասին, ինչպես նաև ինչ դատավարական հետևանք է առաջացել դրանց չներկայացման արդյունքում:

(…)

Ինչ վերաբերում է Դիմողի այն պնդմանը, որ Փաստաբանը պատշաճ կերպով չի տեղեկացրել իրեն գործի ընթացքի մասին և չի պատասխանել հեռախոսազանգերին, ապա այս մասով ևս ներկայացված նյութերը բավարար չեն փաստաբանի վարքագծում առերևույթ կարգապահական խախտում արձանագրելու համար:

Դիմողի կողմից ներկայացվել է ելքային հեռախոսազանգերի արտատպում՝ նոյեմբերի 4-ից դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածի համար: Սակայն նշված արտատպումից հնարավոր չէ պարզել, որ զանգերը կատարվել են հենց Փաստաբանին պատկանող հեռախոսահամարին, ինչպես նաև հնարավոր չէ պարզել կողմերի միջև հաղորդակցության ամբողջական պատկերը՝ ներառյալ մուտքային զանգերը, հետադարձ զանգերը, անձնական հանդիպումները կամ հաղորդակցության այլ եղանակները:

(…)

Միաժամանակ, Դիմողը նշել է, որ պայմանագիրը լուծելիս գրասենյակում հայտնաբերել է վարույթն իրականացնող մարմնից ստացված գրություն, որի մասին, իր պնդմամբ, Փաստաբանը մեկ ամիս շարունակ իրեն չի տեղեկացրել: Ներկայացված նյութերում առկա է քննիչի՝ Փաստաբանին ուղղված 09.12.2025թ. գրության պատճենը: Նշված հանգամանքը գնահատելով՝ Պալատը հարկ է համարում արձանագրել, որ միայն տվյալ գրության առկայությունը դեռևս բավարար չէ եզրակացնելու, որ Փաստաբանը խախտել է վստահորդին տեղեկացնելու պարտականությունը:

Ներկայացված նյութերով պարզված չէ, թե նշված գրությունը երբ է փաստացի ստացվել Փաստաբանի կողմից, արդյոք դրա բովանդակությունը պարունակել է Դիմողի կողմից անհապաղ իրազեկում պահանջող նոր կամ էական տեղեկություն, ինչպես նաև արդյոք Դիմողը դրանից առաջ կամ հետո զրկվել է որևէ դատավարական իրավունքից կամ հնարավորություն չի ունեցել իրացնելու իր շահերի պաշտպանության միջոցները: Ավելին, տվյալ գրության առկայությունը, ինքնին, վկայում է այն մասին, որ Փաստաբանի կողմից վարույթն իրականացնող մարմնի հետ առնվազն որոշակի հաղորդակցություն

իրականացվել է գործի ընթացքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:

(…)

Անդրադառնալով Դիմողի այն պնդմանը, որ պայմանագիրը լուծելուց հետո Փաստաբանը չի վերադարձրել հոնորարի մի մասը, հարկ է արձանագրել հետևյալը.

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին կամ պատվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, **եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:**

Վերոնշյալ կարգավորումից հետևում է, որ հոնորարի վերադարձի հարցի գնահատման համար էական նշանակություն ունի նաև կողմերի միջև կնքված պայմանագիրը:

Սույն դեպքում Դիմողի և Փաստաբանի միջև կնքված պայմանագրի 2.2.3-րդ կետով նախատեսվել է, որ կատարողն իրավունք ունի չվերադարձնել պատվիրատուի կողմից վճարված գումարները, եթե պայմանագրից հրաժարվելու դեպքում պատվիրատուն գրավոր հիմնավորումներ չի ներկայացրել այն մասին, որ պատվերը չի կատարվել կատարողի մեղքով:

Դիմողի կողմից ներկայացված նյութերում առկա չեն տվյալներ այն մասին, որ պայմանագրից հրաժարվելիս կամ դրանից հետո նա Փաստաբանին ներկայացրել է վերոնշյալ պայմանագրային դրույթով նախատեսված գրավոր հիմնավորումներ՝ այն մասին, թե կոնկրետ որ պարտավորությունը չի կատարվել Փաստաբանի մեղքով:

(…)

Ինչ վերաբերում է Դիմողի այն պնդմանը, որ գրասենյակում փաստաթղթերը վերցնելու ժամանակ Փաստաբանը հնչեցրել է փաստաբանի մասնագիտական վարքագծին ոչ համահունչ արտահայտություններ և դրսևորել է ոչ պատշաճ պահվածք, ապա այս պնդումը ևս ներկայացված նյութերով չի հիմնավորվում:

Դիմողի նշված պնդումը հաստատող որևէ ապացույց չի ներկայացվել: Փաստաբանն իր հերթին բացատրությամբ հերքել է հայհոյանքներ հնչեցնելու փաստը և հայտնել է, որ Դիմողն է հայհոյելով հեռացել գրասենյակից: Այս պայմաններում առկա են կողմերի փոխադարձ հակադիր պնդումներ, որոնք ներկայացված նյութերով չեն հաստատվում այնպիսի չափով, որ հնարավոր լինի արձանագրել փաստաբանի կողմից փաստաբանի վարքագծի կանոններին հակասող վարքագծի առերևույթ հատկանիշներ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պալատը գտել է, որ ներկայացված նյութերի համակցությամբ չեն հիմնավորվում այնպիսի փաստական տվյալներ, որոնք առերևույթ կվկայեին Փաստաբանի կողմից Օրենքի կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի որևէ կոնկրետ պահանջի խախտման մասին:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Բողոքաբերը Պալատի նախագահի Որոշման դեմ 30.06.2026 թվականին Պալատի խորհուրդ (**այսուհետև՝ Խորհուրդ**) ներկայացրել է բողոք հայտնելով իր անհամաձայնությունը Որոշման հետ:

Բողոքաբերը Պալատի նախագահի Որոշման դեմ 30.06.2026 թվականին Խորհուրդ ներկայացրած բողոքով հայտնել է իր անհամաձայնությունը Որոշման հետ՝ այն համարելով կողմնակալ և պնդելով, որ Որոշման հիմքում դրվել են Փաստաբանի կողմից ներկայացված իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:

Բողոքաբերը նշել է, որ Փաստաբանը ծառայությունների մատուցման սկզբում իրեն տվել է գործի հնարավոր դրական ելքի խոստում, ինչի հաշվառմամբ ինքն ընդունել է վերջինիս ծառայություններից օգտվելու առաջարկը, մինչդեռ հետագայում Փաստաբանը շարունակաբար նշել է, որ խարդախություն ապացուցելը դժվար է:

Բողոքաբերը վիճարկել է նաև քննչական գործողություններին իր մասնակցության վերաբերյալ Փաստաբանի ներկայացրած տեղեկությունները՝ պնդելով, որ Փաստաբանը չի մասնակցել իր հարցաքննություններին, քանի որ դրանք կատարվել են մինչև վերջինիս ծառայություններից օգտվելը, իսկ առերես հարցաքննությանը մասնակցել է միայն մեկ անգամ՝ ոչ թե Փաստաբանի կողմից նշված քանակով: Բողոքաբերը հայտնել է, որ նշված հանգամանքները կարող են հաստատվել համապատասխան տեսաձայնագրություններով և գրավոր արձանագրություններով:

Անդրադառնալով կողմերի միջև հաղորդակցությանը՝ Բողոքաբերը բողոքին կից ներկայացրել է 2025 թվականի ընթացքում իր հեռախոսահամարից կատարված զանգերի քաղվածքը՝ նշելով, որ դրանով հերքվում է Փաստաբանի պնդումը, թե ինքն ամեն շաբաթ պարբերաբար զանգահարել է նրան: Բողոքաբերը նաև նշել է, որ քաղվածքում արտացոլված վերջին զանգերից մի քանիսը վերաբերել են Շենգավիթի քննչական ստորաբաժանման քննիչի հետ հանդիպման կազմակերպմանը, որը վերջինիս տեղում չլինելու պատճառով չի կայացել: Բողոքին կից ներկայացված քաղվածքը վերաբերում է մեկ տարվա ժամանակահատվածում կատարված ելքային զանգերին:

Բողոքաբերը հերքել է Փաստաբանի այն ներկայացումը, թե ինքը պարբերաբար պահանջել է բողոքներ ներկայացնել վարույթն իրականացնող մարմինների գործողությունների դեմ՝ նշելով, որ հենց Փաստաբանն է իրեն ուղղորդել բողոքներ ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին և Քննչական կոմիտեի նախագահին, իսկ ինքը մինչ այդ նման ընթացակարգի մասին տեղեկացված չի եղել: Նա նաև հայտնել է, որ Կենտրոնի քննչական ստորաբաժանման քննիչի կողմից կատարված հարցումների որևէ արդյունք Փաստաբանն իրեն չի ներկայացրել, իսկ Շենգավիթի քննչական ստորաբաժանման քննիչի կողմից կատարված հարցման վերաբերյալ տեղեկությունն

անձամբ ստացել է քննիչից այն ժամանակ, երբ արդեն հրաժարվել էր Փաստաբանի ծառայություններից:

Բողոքաբերը պնդել է նաև, որ, չնայած իր պահանջներին, Փաստաբանն իր ձեռքի տակ եղած՝ գործի համար նշանակություն ունեցող փաստերը պատշաճ ձևով չի ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին, մինչդեռ, իր գնահատմամբ, դրանց ներկայացումը կարող էր նպաստել գործի՝ դատարան ուղարկվելուն:

Բողոքաբերը հայտնել է, որ 25.01.2026թ. հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից և խնդրել վերադարձնել վճարված գումարի մի մասը՝ հաշվի առնելով, որ գործն այդպես էլ դատարան չի հասել, սակայն Փաստաբանը, ըստ Բողոքաբերի, գումարի վերադարձի վերաբերյալ իր պահանջին պատշաճ չի անդրադարձել:

Բողոքաբերը հերքել է Փաստաբանի այն պնդումը, թե գրասենյակում ինքն է հայհոյանքներ հնչեցրել՝ նշելով, որ նման վարքագիծն իրեն հարիր չէ և ինքը Փաստաբանին միայն հայտնել է, որ վերջինիս պահվածքի և խոսելաձևի կապակցությամբ բողոք է ներկայացնելու:

4. **<u>Փաստաբան Էդվարդ Չինարյանի համառոտ դիրքորոշումը</u>**.

Փաստաբանը 20.07.2026թ. գրությամբ հայտնել է, որ նախկինում ներկայացրած բացատրությամբ արդեն իսկ ներկայացրել է իր դիրքորոշումը բողոքի վերաբերյալ:

Անդրադառնալով Բողոքաբերի կողմից ներկայացված հեռախոսազանգերի քաղվածքներին՝ Փաստաբանը նշել է, որ դրանք թերի են, քանի որ չեն արտացոլում հաղորդակցության ամբողջական պատկերը: Մասնավորապես, ըստ Փաստաբանի՝ շուրջ մեկ տարվա ընթացքում Բողոքաբերը Միացյալ Նահանգներից իրեն զանգահարել է 8-10 անգամ, ինչը ներկայացված քաղվածքներում արտացոլված չէ:

Փաստաբանը նշել է, որ Բողոքաբերի պնդումները՝ գործի ընթացքի վերաբերյալ պատշաճ տեղեկություններ չտրամադրելու մասին, չեն համապատասխանում իրականությանը:

Փաստաբանը հայտնել է, որ մասնակցել է երկու հարցաքննության, երկու առերես հարցաքննության, ինչպես նաև երեք անգամ առերես հարցաքննության անցկացման նպատակով ներկայացել է քննչական բաժին, սակայն դրանք չեն կայացել:

Փաստաբանը նշել է, որ երկու անգամ ուղղորդել է վստահորդին բողոք ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազություն և նույնիսկ թելադրել է դրա բովանդակությունը:

Փաստաբանը տեղեկացրել է, որ Շենգավիթի քննչական բաժին և դատախազություն ուղարկված հարցումների գրավոր պատասխանները, ինչպես նաև վարույթի նյութերը, վերադարձրել է Բողոքաբերին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Փաստաբանը խնդրել է չկայացնել որոշում չստուգված փաստերի հիման վրա:

5. **Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Բողոքաբերի և Փաստաբանի միջև 26.12.2023թ. կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի շրջանակներում Փաստաբանը ստանձնել է Բողոքաբերի իրավունքների և շահերի ներկայացումը քրեական վարույթում, որտեղ վերջինս ունեցել է տուժողի դատավարական կարգավիճակ:

2. Բողոքաբերը, դիմելով Պալատ, Փաստաբանին վերագրել է իրավաբանական ծառայությունների ոչ պատշաճ մատուցում, մասնավորապես՝ գործի դրական ելքի վերաբերյալ խոստում տալը, քննչական գործողություններին պատշաճ չմասնակցելը, իր տրամադրության տակ եղած փաստերը վարույթն իրականացնող մարմնին չներկայացնելը, գործի ընթացքի մասին պատշաճ չտեղեկացնելը և հեռախոսազանգերին չպատասխանելը, ինչպես նաև պայմանագիրը լուծելուց հետո հոնորարի մի մասը չվերադարձնելը և իր նկատմամբ ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելը:

3. Պալատի նախագահի 08.06.2026 թվականի թիվ 508-Ա որոշմամբ Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժվել է՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքի բացակայության պատճառաբանությամբ:

4. Բողոքին կից ներկայացված «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի քաղվածքը վերաբերում է Բողոքաբերի կողմից օգտագործվող +374 99 525429 հեռախոսահամարի՝ 01.01.2025թ.-30.12.2025թ. ժամանակահատվածում կատարված ելքային զանգերին: Պալատի պաշտոնական կայքում Փաստաբանի էջում որպես վերջինիս բջջային հեռախոսահամար հրապարակված է 091 46 31 24 հեռախոսահամարը: Ներկայացված քաղվածքում նշված հեռախոսահամարին կատարված զանգեր առկա չեն, իսկ քաղվածքում արտացոլված որևէ այլ հեռախոսահամարի՝ Փաստաբանին պատկանելու վերաբերյալ Բողոքաբերի կողմից այլ տվյալ կամ ապացույց չի ներկայացվել:

5. Գործի նյութերում առկա է քննիչի՝ Փաստաբանին հասցեագրված 09.12.2025թ. թիվ 47/443570-25 գրության պատճենը: Բողոքաբերը պնդել է, որ նշված գրության և գործի ընթացքին վերաբերող տեղեկությունների մասին Փաստաբանն իրեն չի տեղեկացրել, մինչդեռ Փաստաբանը հայտնել է, որ Բողոքաբերին տեղեկություններ է տրամադրել վարույթի ընթացքի վերաբերյալ, իսկ վարույթն իրականացնող մարմիններից ստացված գրավոր պատասխանները և վարույթի նյութերը վերադարձրել է նրան:

6. Կողմերի միջև կնքված պայմանագրի 2.2.3-րդ կետով նախատեսվել է, որ կատարողն իրավունք ունի չվերադարձնել պատվիրատուի կողմից վճարված գումարները, եթե պայմանագրից հրաժարվելու դեպքում պատվիրատուն գրավոր հիմնավորումներ չի ներկայացրել այն մասին, որ պատվերը չի կատարվել կատարողի մեղքով: Ներկայացված

նյութերում առկա չեն տվյալներ այն մասին, որ պայմանագրից հրաժարվելիս կամ դրանից հետո Բողոքաբերը Փաստաբանին ներկայացրել է նշված պայմանագրային դրույթով նախատեսված գրավոր հիմնավորումներ:

7. Գրասենյակում Փաստաբանի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու վերաբերյալ Բողոքաբերի պնդումը Փաստաբանը հերքել է, իսկ այդ դրվագի վերաբերյալ կողմերի բացատրություններից բացի որևէ այլ օբյեկտիվ տվյալ կամ ապացույց չի ներկայացվել:

4. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>**.

Խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի Որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 39.11-**րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝** ***բողոքի քննության ժամանակ խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում***:

Օրենքի 39.11-**րդ հոդվածի** 9-**րդ մասի համաձայն՝** *Փաստաբանների պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) փաստաբանների պալատի նախագահի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) փաստաբանների պալատի նախագահի որոշումը վերացնելու մասին:

Օրենքի 39-**րդ հոդվածի** 1-**ին մասի համաձայն՝** *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար (…):*

Օրենքի 39.3-**րդ հոդվածի** 1-**ին մասի** 1-**ին կետի համաձայն՝** *կարգապահական վարույթի հարուցումը մերժվում է,* ***եթե՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են***:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ ***Օրենքով սահմանված հիմքերի առերևույթ առկայության դեպքում***: Ընդ որում, ի թիվս այլնի՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է հանդիսանում նաև Օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ: Ընդ որում, ***այն դեպքում, երբ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են, ապա փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը ենթակա է մերժման***:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից նաև հետևում է, որ կարգապահական

վարույթի հարուցման համար անհրաժեշտ է հանգամանքների այնպիսի համակցություն, որոնք արտաքուստ, առանց դրանց ըստ էության քննության, ողջամիտ կասկած են հարուցում փաստաբանի կողմից Օրենքի և (կամ) Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների հնարավոր խախտման վերաբերյալ:

Հետևաբար՝ կարգապահական վարույթի հարուցման հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին Բողոքաբերի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների կամ փաստերի վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք կվկայեն փաստաբանի կողմից հնարավոր կարգապահական խախտումը կատարելու մասին:

Խորհուրդը հարկ է համարում Բողոքաբերի յուրաքանչյուր էական պնդմանն անդրադառնալ առանձին:

Անդրադառնալով Փաստաբանի կողմից գործի դրական ելքի վերաբերյալ խոստում տված լինելու պնդմանը, Խորհուրդը նկատում է, որ Կանոնագրքի 3.1.10-րդ ենթակետի համաձայն՝ փաստաբանն իր մասնագիտական պարտավորությունների բարեխիղճ և որակյալ կատարումից բացի, այլ երաշխավորություն չի կարող տալ, մասնավորապես չի կարող երաշխավորել հանձնարարության կատարման արդյունքը՝ անկախ արդյունքի կանխատեսելիությունից, երբ այդ արդյունքը կախված է դատավորի կամ վարույթն իրականացնող մարմնի որոշումից: Նույն կանոնը քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից վստահորդի օգտին վերջնական որոշում կայացնելու խոստումը դիտարկում է որպես ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:

Տվյալ դեպքում Բողոքաբերը սկզբնական դիմումով նշել է, որ Փաստաբանը խոստացել է, որ «խնդիրը հաջողությամբ կլուծի», իսկ Խորհրդին ներկայացված բողոքում այդ հանգամանքը բնութագրել է որպես «գործի հնարավոր դրական ելքի խոստում»: Այդուհանդերձ, ո՛չ դիմումով, ո՛չ բողոքով չի ներկայացվել Փաստաբանին վերագրվող կոնկրետ արտահայտությունը, դրա ամբողջական բովանդակությունը կամ համատեքստը, ինչպես նաև որևէ այլ տվյալ, որի հիման վրա հնարավոր կլիներ եզրակացնել, որ խոսքը ոչ թե գործի հեռանկարների վերաբերյալ մասնագիտական գնահատականի կամ հնարավոր արդյունքի կանխատեսման, այլ հենց Կանոնագրքի 3.1.10-րդ ենթակետով արգելված՝ վարույթն իրականացնող մարմնից կախված որոշակի արդյունքի երաշխավորման մասին է: Ավելին, բողոքում Բողոքաբերն ինքն է վկայակոչում «հնարավոր դրական ելքի» վերաբերյալ խոսակցություն, ինչը, առանց այդ խոսակցության կոնկրետ բովանդակության վերաբերյալ լրացուցիչ տվյալների, ինքնին չի նույնանում որոշակի արդյունքի երաշխավորման հետ: Հետևաբար, նշված պնդումն իր ներկայացված ձևով չունի այնպիսի փաստական որոշակիություն, որը ողջամտորեն թույլ կտար ենթադրել Կանոնագրքի 3.1.10-րդ ենթակետի առերևույթ խախտում:

Անդրադառնալով Փաստաբանի կողմից իրավական օգնությունը ոչ պատշաճ

մատուցելու, քննչական գործողություններին չմասնակցելու և Բողոքաբերի տրամադրության տակ եղած փաստերը վարույթն իրականացնող մարմնին չներկայացնելու պնդումներին, Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը, ի թիվս այլնի, ներառում է վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Բողոքաբերը բողոքում նշել է, որ Փաստաբանը չի մասնակցել հարցաքննություններին և մասնակցել է միայն մեկ առերեսման՝ հակադրելով այդ հանգամանքը Փաստաբանի ներկայացրած բացատրությանը: Միաժամանակ Բողոքաբերը չի մատնանշել որևէ կոնկրետ քննչական գործողություն՝ նշելով դրա ժամանակը և այն հանգամանքները, որոնց պայմաններում Փաստաբանը պարտավոր էր մասնակցել այդ գործողությանը, սակայն չի մասնակցել: Քննչական գործողություններին Փաստաբանի մասնակցության քանակի վերաբերյալ կողմերի միջև առկա տարաձայնությունն ինքնին դեռևս չի վկայում Փաստաբանի կողմից մասնագիտական որևէ պարտականության չկատարման մասին:

Նույն կերպ, Բողոքաբերը, պնդելով, որ Փաստաբանը պատշաճ չի ներկայացրել իր տրամադրության տակ եղած փաստերը, չի հստակեցրել, թե հատկապես ինչ փաստերի կամ ապացույցների մասին է խոսքը, երբ և ինչ եղանակով են դրանք փոխանցվել Փաստաբանին, ինչ գործողություն էր դրանց կապակցությամբ անհրաժեշտ կատարել և Փաստաբանի կողմից չի կատարվել: Բողոքաբերի այն գնահատականը, որ դրանց ներկայացումը «կարող էր գործը դատական հասցնել», հնարավոր հետևանքի վերաբերյալ ենթադրություն է և, առանց չկատարված կոնկրետ մասնագիտական գործողության մատնանշման, չի կարող ինքնուրույն վկայել Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի հնարավոր խախտման մասին: Ընդ որում, Փաստաբանը հայտնել է, որ մասնակցել է քննչական գործողությունների, բազմիցս ներկայացել է քննչական բաժին, հաղորդակցվել է վարույթն իրականացնող մարմնի հետ, ինչպես նաև Բողոքաբերին ուղղորդել է բողոքներ ներկայացնելու հարցում: Բողոքաբերն իր բողոքում ևս չի հերքում վերջին հանգամանքը, այլ վիճարկում է միայն այն, թե ում նախաձեռնությամբ են այդ բողոքները ներկայացվել: Նշված տարաձայնությունն ինքնին կարգապահական խախտման հատկանիշ չի պարունակում:

Անդրադառնալով Փաստաբանի կողմից հեռախոսազանգերին չպատասխանելու և հանձնարարության կատարման ընթացքի մասին պատշաճ չտեղեկացնելու վերաբերյալ պնդումներին, Խորհուրդը հաշվի է առնում, որ Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի

համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին, իսկ Կանոնագրքի 3.6.2-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկացումը կարող է կատարվել հեռախոսի, էլեկտրոնային փոստի, նամակագրության կամ անձնական զրույցների միջոցով:

Այս մասով Բողոքաբերը բողոքին կից ներկայացրել է «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ից ստացված՝ իր +374 99 525429 հեռախոսահամարի 2025 թվականի ելքային զանգերի քաղվածքը՝ այն վկայակոչելով որպես Փաստաբանին կատարված զանգերի վերաբերյալ իր պնդումը հաստատող ապացույց: Սակայն Պալատի պաշտոնական կայքում Փաստաբանի էջում որպես վերջինիս բջջային հեռախոսահամար հրապարակված է 091463124 հեռախոսահամարը, մինչդեռ Բողոքաբերի ներկայացրած քաղվածքում նշված հեռախոսահամարին կատարված որևէ զանգ արտացոլված չէ:

Միաժամանակ Բողոքաբերը չի ներկայացրել որևէ տվյալ, որ քաղվածքում արտացոլված այլ հեռախոսահամարներից որևէ մեկը պատկանում կամ տվյալ ժամանակահատվածում օգտագործվել է Փաստաբանի կողմից: Հետևաբար Բողոքաբերի կողմից ներկայացված քաղվածքը, իր իսկ բովանդակությամբ, հնարավորություն չի տալիս հաստատելու, որ դրանում արտացոլված զանգերը կատարվել են Փաստաբանին, առավել ևս՝ որ վերջինս դրանք պարբերաբար թողել է անպատասխան:

Խորհուրդը նկատում է, որ վերոգրյալը չի նշանակում, որ Փաստաբանը չէր կարող օգտագործել Պալատի պաշտոնական կայքում չհրապարակված այլ հեռախոսահամար: Սակայն այդպիսի հեռախոսահամարի՝ Փաստաբանին պատկանելու կամ նրա կողմից օգտագործվելու վերաբերյալ որևէ տվյալ ներկայացված չլինելու պայմաններում հնարավոր չէ Բողոքաբերի կողմից ընտրված կամ առանձնացված հեռախոսազանգերը վերագրել Փաստաբանի հետ հաղորդակցությանը: Հետևաբար բողոքին կից ներկայացված հեռախոսային քաղվածքը չի վերացնում այն փաստական անորոշությունը, որն ընկած է եղել Պալատի նախագահի Որոշման հիմքում:

Ինչ վերաբերում է քննիչի՝ Փաստաբանին ուղղված 09.12.2025թ. գրության և վարույթի ընթացքի վերաբերյալ տեղեկությունները Բողոքաբերին չտրամադրելու պնդմանը, ապա նշված գրության առկայությունն ապացուցում է վարույթն իրականացնող մարմնի և Փաստաբանի միջև համապատասխան գրագրության փաստը, սակայն ինքնին չի ապացուցում Բողոքաբերին դրա բովանդակության մասին չտեղեկացնելու հանգամանքը: Գործի նյութերից չի պարզվում, թե երբ է գրությունը փաստացի ստացվել Փաստաբանի կողմից և արդյոք դրա բովանդակությունը Բողոքաբերին չի հաղորդվել Կանոնագրքի 3.6.2-րդ ենթակետով նախատեսված հաղորդակցության որևէ եղանակով: Փաստաբանն իր հերթին հայտնել է, որ Բողոքաբերին տեղեկացրել է վարույթի ընթացքի վերաբերյալ և հետագայում նրան վերադարձրել է վարույթն իրականացնող մարմիններից

ստացված գրավոր պատասխաններն ու նյութերը:

Բողոքաբերի այն պնդումը, որ հետագայում համապատասխան տեղեկությունն անձամբ ստացել է Շենգավիթի շրջանի քննիչից, ևս ինքնին չի հաստատում, որ մինչ այդ Փաստաբանը չի կատարել վստահորդին կանոնավորապես տեղեկացնելու իր պարտականությունը: Հետևաբար ներկայացված տվյալների համակցությամբ Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի խախտման վերաբերյալ ողջամիտ ենթադրություն ձևավորելու համար անհրաժեշտ փաստական հիմք առկա չէ:

Անդրադառնալով հոնորարի մի մասը վերադարձնելու վերաբերյալ պնդմանը, Խորհուրդը հաշվի է առնում, որ Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Տվյալ դեպքում, կողմերի միջև կնքված պայմանագրի 2.2.3-րդ կետով նախատեսվել է վճարված գումարը չվերադարձնելու վերաբերյալ հատուկ պայման՝ պատվիրատուի կողմից պայմանագրից հրաժարվելու դեպքում պատվերը կատարողի մեղքով չկատարված լինելու վերաբերյալ գրավոր հիմնավորում չներկայացնելու դեպքում, իսկ նման գրավոր հիմնավորում Փաստաբանին ներկայացված լինելու վերաբերյալ տվյալներ չեն ներկայացվել: Հետևաբար միայն այն հանգամանքը, որ կողմերի միջև առաջացել է հոնորարի վերադարձի վերաբերյալ տարաձայնություն, չի վկայում Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի առերևույթ խախտման մասին:

Անդրադառնալով Փաստաբանի կողմից գրասենյակում ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու վերաբերյալ պնդմանը, Խորհուրդն արձանագրում է, որ Բողոքաբերը նաև բողոքում շարունակում է հերքել Փաստաբանի բացատրությունը և պնդում է, որ ինքն է Փաստաբանին հայտնել վերջինիս վարքագծի վերաբերյալ բողոք ներկայացնելու մտադրության մասին: Այդուհանդերձ, կողմերից որևէ մեկի պնդումը հաստատող ապացույց չի ներկայացվել: Փաստաբանը հերքել է իրեն վերագրվող վարքագիծը, ուստի միայն կողմերի փոխադարձաբար հակադիր պնդումների առկայությունը բավարար չէ Փաստաբանի կողմից մասնագիտական վարքագծի կանոններին հակասող արարքի առերևույթ հատկանիշներ արձանագրելու համար:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Բողոքաբերի կողմից նկարագրված հանգամանքներն ինքնին չեն կարող վկայել Օրենքի և (կամ) փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների առերևույթ խախտման դրսևորման մասին, քանի որ նրա կողմից չի ներկայացվել որևիցե հանգամանք, որը կհիմնավորեր կամ ողջամտորեն թույլ կտար ենթադրել Փաստաբանի կողմից որևէ խախտում թույլ տրված լինելու մասին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պալատի խորհուրդն արձանագրում է, որ Բողոքաբերի բողոքում նկարագրված հանգամանքները չեն կարող հիմք հանդիսանալ Պալատի նախագահի Որոշման վերացման համար, ուստի այն պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 1-**ին մասի**, 39.11-**րդ հոդվածի** 3-**րդ մասի և** 9-**րդ մասի** 1-**ին կետի պահանջներով**,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 08.06.2026 թվականի «Փաստաբան Էդվարդ Վոլոդյայի Չինարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 508-Ա որոշման դեմ Աննա Սահակյանի կողմից 30.06.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:
2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 08.06.2026 թվականի թիվ 508-Ա որոշումը:
3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Թամարա Բաղդասարյան**

30 հուլիսի 2026թ.
թիվ ԿԳ/20-Ա
ք. Երևան